



«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ

2019 թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ծանոթագրություն 1.«Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»**

**1.1 Իրավական դաշտ**

**1.1.1 Բանկի հիմնական գործունեությունը**

«Արցախբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 1996թ-ին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 1996թ-ի օգոստոսի 14-ին ՀՀ կետրոնական բանկի կողմից թիվ 75 արտոնագրային համարով:

«Արցախբանկ» ՓԲԸ-ն ունիվերսալ բանկ է, որը ԱՀ և ՀՀ տարածքներում տրամադրում է ժամանակակից բանկային ծառայությունների գրեթե լրիվ տեսականի: Բանկը օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ ֆինանսական գործառնությունները՝ ընդունում է ցպահանջ և ժամկետային ավանդներ, տրամադրում է առևտրային, սպառողական և հիփոթեքային վարկեր, բացում և վարում է հաշիվներ, կատարում է դրամական փոխանցումներ, մատուցում է այլ վճարահաշվարկային ծառայություններ, գնում և վաճառում է արժեթղթեր, գնում և վաճառում (փոխանակում) է արտարժույթ, օրենքով սահմանված կարգով իրականացնում է ապահովագրական գործակալի գործառնություններ, իրականացնում է օրենքով չարգելված այլ գործունեություն:

Բանկն ունի քսաներկու մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Բանկն 30.06.2019թ դրությամբ ունի 475 աշխատող:

**1.1.2 Գործարար միջավայրը**

Բանկի գործարար միջավայրը Արցախի և Հայաստանի Հանրապետություններն (այսուհետ երկուսը միասին՝ նաև Հանրապետություն) են: Չնայած Հանրապետությունը շարունակում է իրականացնել քաղաքական և տնտեսական բարեփոխումներ, որպես զարգացող շուկա, Հանրապետությունում բացակայում են զարգացած գործարար միջավայրը և համապատասխան օրենսդրական ենթակառուցվածքները, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի այդ, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և կառուցվածքային զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով: Այնուամենայնիվ, Բանկի Ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ հանգամանքներում ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ Բանկի կայունությունն ապահովելու նպատակով:

Բանկի ղեկավարությունը գտնում է,որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

1.1.3 Բանկը որևէ խմբի անդամ չի հանդիսանում:

**1.2 Կորպորատիվ կառավարում**

**1.2.1 Խորհրդի կառուցվածքը, կազմը**

<b>Խորհրդի նախագահ՝</b>	<b>Արդեն Կրիշորի Սելլեֆյան</b>
<b>Խորհրդի անդամներ՝</b>	<b>Արմեն Ռազմիկի Դարբինյան</b>
	<b>Էդվարդ Մարտինի Սանդոյան</b>
	<b>Լևոն Վարազդատի Ղազարյան</b>
	<b>Արթուր Հակոբի Օսիկյան</b>

**1.2.2 Տնօրինության կառուցվածքը, կազմը**

<b>Գործադիր տնօրեն - Վարչության նախագահ՝</b>	<b>Արտակ Ռուդիկի Բալայան</b>
<b>Վարչության անդամներ՝</b>	
<b>Գործադիր տնօրեն -Վարչության նախագահի տեղակալ՝</b>	<b>Վահրամ Բորիսի Բաղդասարյան</b>
<b>Զարգացման գծով տնօրեն, Գործադիր տնօրեն-վարչության նախագահի տեղակալ՝</b>	<b>Լևոն Աշոտի Մարտիրոսյան</b>
<b>Գլխավոր Գանձապետ՝</b>	<b>Պարույր Համլետի Գրիգորյան</b>
<b>Գլխավոր հաշվապահ՝</b>	<b>Ռուզան Վալերիկի Խաչատրյան</b>

1.2.3 Բանկի կանոնադրական կապիտալի 97.06 %-ը պատկանում է իրավաբանական անձանց, իսկ մնացած 2.94 %-ը՝ ֆիզիկական անձանց:

1.2.4 Բանկի նշանակալից մասնակիցներն են

<b>1 «Հայաստանի Բիզնեսի Հիմնադրամ» ՓԲԸ</b>	<b>51.72%</b>
<b>2 Արցախի ներդրումային հիմնադրամ</b>	<b>44.99%</b>

Բանկի բաժնետերերի քանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է ութ բաժնետեր:

1.2.5 Բանկի խորհուրդը մեծ ուշադրություն է դարձնում բանկում կարգապահ և բարձր որակավորում ունեցող միջին և բարձր օղակի ղեկավարների առկայությանը: Խորհուրդը Բանկի ղեկավարների վարձատրության (ներառյալ խրախուսամանն ուղղված վճարների) մակարդակը պահպանում է առավելագույն մրցակցային սահմաններում:

1.2.6 Բանկի արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Բանկի խորհուրդը:

## **Ծանոթագրություն 2. «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»**

### **2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում և ներկայացվում են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի (<<ՀՄՄՀ)> կողմից: Ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են << դրամով՝ հազարների ճշտությամբ: Ֆինանսական հաշվետվությունների առումով հաշվետու տարի է համարվում հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են իրական արժեքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնք իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով, բացառությամբ հողի և շինությունների, որոնք ներկայացվում են վերագնահատված արժեքով:

### **2.2 Եկամուտների և ծախսերի ճանաչում**

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ՝ Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող գործիքների, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես տոկոսային եկամուտ և տոկոսային ծախս՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Բանկի սուբյեկտների և սուբսիդիարի գծով ստացվելիք գումարները հաշվեզրկում են եկամուտներին յուրաքանչյուր օր: Հաշվեզրկող գումարի հաշվարկման համար հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը:

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեզրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պրոտֆեյթի, այլ կառավարական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

Ջուտ առևտրային եկամուտը ներառում է Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Ջուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առջ ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը: Շահաբաժիններից ստացվող եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

### **2.3 Արտարժույթային գործառնություններ**

Արտարժույթով գործարքները հաշվառվում են << դրամով՝ կիրառելով գործարքի օրվա դրությամբ << կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են նշյալ միջին փոխարժեքով: Վերագնահատումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես շահույթ կամ վնաս:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով, փոխարկվում են << դրամի՝ գործարքի օրվա միջին փոխարժեքով:

#### **Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.**

	30 հունիսի 2019թ.	30 հունիսի 2018թ.
<< դրամ/ԱՄՆ դոլար	477.11	482.24
<< դրամ/ԵՎՐՈ	543.19	561.81

### **2.4 Հարկային հաշվառում**

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են այլ համապարփակ եկամտում, ինչի դեպքում հարկերը Նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամտում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամտից վճարվելից հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Բանկն իր գործունեության ընթացքում վճարում է նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

## 2.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ կենտրոնական բանկում պահվող միջոցներից (բացառությամբ՝ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցների փաստացի ներհոսքի և/կամ արտահոսքի ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով՝ պատշաճ կերպով կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով :

## 2.6 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը հիմնված է Լոնդոնի թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են «թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ» հոդվածում՝ այլ եկամուտներում և ծախսերում:

## 2.7 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնությամբ բացված ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի համապատասխան ներքին իրավական ակտերով սահմանված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների

նկատմամբ գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

## 2.8 Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական գործիքների դասակարգման, չափման ինչպես նաև արժեզրկման հաշվառման համար կիրառել է Նոր՝ ՖՀՄՍ 9-ի “Ֆինանսական գործիքներ.ճանաչումը և չափումը”ստանդարտը: Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Երբ Բանկը սկզբնապես ճանաչում է ֆինանսական ակտիվը, ապա պետք է այն դասակարգի՝ որպես հետագայում կա՛մ ամորտիզացված արժեքով, կա՛մ իրական արժեքով չափվող՝ հիմնվելով՝ երկու ստորև բերվածների վրա.

- ֆինանսական ակտիվների կառավարման Բանկի բիզնես մոդելի. և
- ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերի պայմանագրային բնութագրի:

Բանկը Ֆինանսական ակտիվների դասակարգման որոշման նպատակով ֆինանսական ակտիվները դասակարգում է հետևյալ բիզնես մոդելների երեք կատեգորիաներում՝

- Դրամական միջոցների հոսքեր հավաքելու համար ակտիվներ պահելը (հավաքելու համար պահվող),

- Դրամական միջոցների հոսքեր հավաքելու եւ վաճառելու համար ակտիվներ պահելը (հավաքելու եւ վաճառելու համար պահվող),

- Այլ բիզնես մոդել:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքման համար ակտիվներ պահելը.
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ երկու կատեգորիաներում՝

- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI «fair value through other comprehensive income»)

- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (FVTPL՝ «fair value through profit or loss»)

Ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI), եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքման համար ակտիվներ պահելը, այնպես էլ այդ ակտիվները վաճառելը.
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն կարող դասակարգվել որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող կամ իրական արժեքով հաշվառվող՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) կամ որոնք դասակարգվում են այլ բիզնես

մոդելում և որոնց դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ չեն, պետք է հաշվառվեն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (FVTPL)

Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել Բանկի բիզնես մոդելի փոփոխություն:

Պարտքային արժեթղթերը, որոնք առ 31.12.17թ. դասակարգված են եղել որպես վաճառքի համար մատչելի, ՖՀՄՍ 9-ով կաչփվեն իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով, քանի որ բավարարում են դրամական միջոցների հոսքեր հավաքելու

և վաճառելու համար պահվող բիզնես մոդելին :Քանի որ վարկերը բավարարում են հավաքելու համար պահվող բիզնես մոդելին, ապա Նոր ստանդարտի կիրառումից հետո կշարունակվեն չափվել ամորտիզացված արժեքով:

**Ոեպո և հակադարձ ոեպո համաձայնագրեր.**

Հետզնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները (ոեպո) դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետզնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը (հակադարձ ոեպո) չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված վարկեր և փոխառություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետզնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Տրամադրված վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

**2.9 Արժեգրվում**

ՖՀՄՍ 9 պահանջում է ակնկալվող պարտքային կորուստների պահուստ ճանաչել ֆինանսական ակտիվի, վարձակալության գծով դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների կամ վարկերի տրամադրման պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գծով, որոնց համար կիրառելի են արժեգրվման պահանջները: Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում պարտքային կորուստների հավանականությամբ կշռված միջին արժեքն է (այսինքն դրամական միջոցների դեֆիցիտի ներկա արժեքը):

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը պետք է գնահատի, թե արդյոք էական է ավելացել ֆինանսական գործիքի վարկային ռիսկը սկզբնական ճանաչման պահից հետո: Գնահատումն իրականացնելիս, Բանկը պետք է օգտագործի ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի գծով գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ, երբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էական աճել է: Այն դեպքում, երբ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էական չի աճել, Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի գծով 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:

Վարկային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը դիտարկում է ինչպես քանակական, այնպես էլ որակական չափանիշներ:

Բանկը սահմանում է չափանիշներ, որոնց միջոցով գնահատում է դեֆոլտի հավանականության քանակական համեմատական աճը, ինչը կփաստի վարկային ռիսկի էական աճը: Դեֆոլտի հավանականության էական աճի շեմի սահմանումը կախված է սկզբնական ճանաչման պահին դեֆոլտի հավանականությունից:

Բացի դրանից, ընդհանուր առմամբ, որակական գործոնները, որոնք մատնանշում են վարկային ռիսկի աճ, ներառված են դեֆոլտի հավանականության գնահատման մոդելում, և այդպիսով ներառվում են քանակական գնահատականի մեջ, այլ ոչ թե առանձին որակական գնահատականում:

Այնուամենայնիվ, եթե հնարավոր չէ քանակական գնահատման մեջ ներառել որակական գործոնների վերաբերյալ առկա ընթացիկ տեղեկատվությունը, ապա վարկային ռիսկի էական աճը որոշելիս, դրանք դիտարկվում են որպես առանձին որակական գնահատում:

Բանկի մոտեցումը ՖՀՄՍ 9-ի շրջանակում ակնկալվող պարտքային կորուստների ու տոկոսային եկամուտների ճանաչմանը հիմնված է եռափուլ գործընթացի վրա: Փուլ 1-ն ընդգրկում է ցածր վարկային ռիսկ ունեցող ֆինանսական գործիքներին, որոնց վարկային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի նվազել: Փուլ 2-ն ընդգրկվում են այն ֆինանսական ակտիվները, որոնց վարկային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո: 3-րդ Փուլը վերաբերում է ֆինանսական ակտիվներին, որոնց արժեգրվման վերաբերյալ առկա են օբյեկտիվ վկայություններ:

Ֆինանսական ակտիվի գծով ակնկալվող պարտքային կորուստներ (ECL). ներկայացնում է պարտքային կորուստների միջին արժեքը՝ կշռված դեֆոլտի ի հայտ գալու համապատասխան ռիսկով, և հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$ECL = PD \times EAD \times LGD$$

որտեղ.

**PD**-ն դեֆոլտի հավանականությունն է, որը կարող է տեղի ունենալ միայն գնահատված ժամանակահատվածի շրջանակներում որոշակի պահին, եթե ֆինանսական ակտիվը մինչ այդ չի ապաճանաչվել և դեռևս ներառված է պորտֆելում:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (**EAD**). ներկայացնում է դեֆոլտի ապագա ամսաթվի դրությամբ չմարված պարտքի ընդհանուր մնացորդի գումարը, որը ենթակա է վարկային ռիսկի՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսագումարների մարումը:

Վնասը դեֆոլտի ժամանակ (**LGD**). այն արտահայտում է վնասի չափը, որը առաջանում է վարկի դիֆոլտային կարգավիճակում: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս

ունի ստանալ, ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Որպես կանոն, այն արտահայտվում է դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի (EAD) նկատմամբ տոկոսով:

ՖՀՄՍ (IFRS) 9 ստանդարտի պահանջների համաձայն, ֆինանսական ակտիվների արժեգրվման պահուստի գնահատման շրջանակներում անհրաժեշտ է որոշել մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը դեֆոլտի հավանականության վրա:

Այս նպատակով Բանկը բացահայտում է պատմական դեֆոլտի հավանականության և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների միջև կապերն ըստում է իր վարկային պորտֆելի վրա առավել ազդեցիկ կապ ցուցաբերած մակրոտնտեսական ցուցանիշների համախումբը: Բացահայտված կապի կիրառմամբ Բանկը կատարում է հաջորդ տարիների դեֆոլտի հավանականության ցուցանիշների կանխատեսում ըստ առանձին փուլերի (stage) ու ենթապորտֆելների խմբերի, և վերջիններս միջոցով ստանում է մակրոտնտեսական ազդեցության ճշգրտման համապատասխան գործակիցներ:

## 2.11 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության և/կամ արժեզրկումից կուտակված կորուստների տարբերությամբ, բացառությամբ՝ հողի և շինությունների, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով: Բանկի շենքերը հաշվառվում են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Հողը հաշվառվում է վերագնահատված արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ, հետևաբար չի ամորտիզացվում: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Վարձակաված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են օգտակար ծառայության ժամկետում:

Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում, քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է կոնկրետ նպատակով ակտիվն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ որպես Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող դասակարգելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շտրոհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում :

Հիմնական միջոցների արժեքը փոխհատուցվում է դրանց մաշվածության հաշվեգրման միջոցով: Հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրման համար Բանկը սահմանում է հետևյալ նորմերը.

Հիմնական միջոցի անվանումը	տարիներ
• Շենքեր	30 տարի
• Համակարգիչներ	3 տարի
• Բանկոմատներ	10 տարի
• Սարքավորումներ	8 տարի
• Փոխադրամիջոցներ	8 տարի
• Այլ հիմնական միջոցներ	8 տարի

Հիմնական միջոցների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, որի համաձայն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում կատարվում են հավասարաչափ հատկացումներ:

## 2.12 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և նման այլ ակտիվներից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները կարող են վերանայվել յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի վերլուծվում են՝ հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում: Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

## 2.13 Արագամաշ առարկաներ

Արագամաշ առարկաներին վերաբերում են այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին՝ անկախ դրանց արժեքից: Այդ ակտիվների թվին են դասվում՝ պահեստամասերը, սպասարկող սարքավորումները, գործիքները և հարմարանքները, տնտեսական գույքը: Արագամաշ առարկաների արժեքը ծախսագրվում է շահագործման հանձնելու պահին:

## 2.14 Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են եկամուտներին գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

**2.15 Ներգրավված միջոցներ**

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապահովման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

**2.16 Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

**2.17 Բաժնետիրական կապիտալ**

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Բացի Բանկի միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Երբ Բանկը գնում է իր բաժնետոմսերը, սեփական կապիտալը նվազեցվում է վճարված գումարի չափով, ներառյալ գործառնությանը բնորոշ բոլոր ծախսերը՝ նվազեցված հարկերով, մինչև գործարքի չեղյալ համարվելը կամ վերաթողարկումը: Երբ գնված բաժնետոմսերը վճարվում են երրորդ կողմին կամ վերաթողարկվում են, ստացված գումարները ներառվում են կապիտալում: Գնված բաժնետոմսերը հաշվառվում են միջին կշռված արժեքով:

Հաշվապահական հաշվեկշիռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշիռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշիռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշիռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

**Ծանոթագրություն 3. «Ձուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ»**

<b>Տոկոսային և նմանատիպ եկամուտներ</b>	<b>01.04.19-30.06.19</b>	<b>01.01.19-30.06.19</b>	<b>01.04.18-30.06.18</b>	<b>01.01.18-31.06.18</b>
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	2,981	9,709	18,677	68,817
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից	2,764,354	5,589,177	2,696,353	5,241,414
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	735,466	1,483,779	644,755	1,205,086
Տոկոսային եկամուտ Ռեպո պայմանագրերից և արժույթային սվոպից	305,195	580,418	294,622	580,234
Այլ տոկոսային եկամուտ	0	461	194	429
<b>Ընդամենը</b>	<b>3,807,996</b>	<b>7,663,544</b>	<b>3,654,601</b>	<b>7,095,980</b>
<b>Տոկոսային և նմանատիպ ծախսեր</b>				
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդների և վարկերի դիմաց	114,564	237,279	163,005	337,021
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների	1,614,669	3,299,338	1,666,191	3,270,112
Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	0	0	0	0
Տոկոսային ծախսեր Ռեպո պայմանագրերի դիմաց	970	1,015	0	0
Այլ տոկոսային ծախսեր	284	284	0	0
<b>Ընդամենը</b>	<b>1,730,487</b>	<b>3,537,916</b>	<b>1,829,196</b>	<b>3,607,133</b>
<b>Ձուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</b>	<b>2,077,509</b>	<b>4,125,628</b>	<b>1,825,405</b>	<b>3,488,847</b>

**Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»**

<b>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</b>	<b>01.04.19-30.06.19</b>	<b>01.01.19-30.06.19</b>	<b>01.04.18-30.06.18</b>	<b>01.01.18-31.06.18</b>
Ռոամարկային գործառնություններից	19,152	30,388	21,228	35,590
Հաշվարկային ծառայություններից	21,695	44,934	26,167	52,036
Երաշխիքներից, ակրեդիտիվներով գործառնություններից	3,808	6,873	3,837	6,631
Վճարային քարտերի սպասարկումից	38,177	75,605	48,017	90,519
Այլ կոմիսիոն վճարներ	78,540	126,492	38,396	67,448
<b>Ընդամենը</b>	<b>161,372</b>	<b>284,292</b>	<b>137,645</b>	<b>252,224</b>
<b>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</b>				
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	3,794	5,479	2,820	5,292
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	34,917	69,765	35,271	72,771
Երաշխիքներից, հոծարագրերով, ակրեդիտիվներով, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ	-	0	0	0
Այլ կոմիսիոն վճարներ	764	1,648	1,596	2,780
<b>Ընդամենը</b>	<b>39,475</b>	<b>76,892</b>	<b>39,687</b>	<b>80,843</b>
<b>Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ</b>	<b>121,897</b>	<b>207,400</b>	<b>97,958</b>	<b>171,381</b>
<b>Եկամուտ շահաբաժիններից</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>10,537</b>

**Ծանոթագրություն 5. «Ձուտ եկամուտ առևտրային գործառնություններից»**

<b>Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ներդրումներից</b>	<b>01.04.19-30.06.19</b>	<b>01.01.19-30.06.19</b>	<b>01.04.18-30.06.18</b>	<b>01.01.18-31.06.18</b>
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	50,673	121,880	35,944	45,490
այդ թվում՝ Աձանցյալներից	43,537	111,400	34,042	42,515
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	(1,346)	(4,237)	(2,023)	(3,429)
<b>Ընդամենը</b>	<b>49,327</b>	<b>117,643</b>	<b>33,921</b>	<b>42,061</b>
<b>Արտարժույթային գործառնություններից</b>				
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	59,534	100,684	52,168	106,890
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(38,839)	(75,354)	103	21,908
<b>Ընդամենը</b>	<b>20,695</b>	<b>25,330</b>	<b>52,271</b>	<b>128,798</b>
<b>Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներից և հուշադրամներից</b>				
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	7,672	10,945	(6,272)	(4,164)
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ				
<b>Ընդամենը</b>	<b>7,672</b>	<b>10,945</b>	<b>(6,272)</b>	<b>(4,164)</b>
<b>Ձուտ եկամուտ առևտրային գործառնություններից</b>	<b>77,694</b>	<b>153,918</b>	<b>79,920</b>	<b>166,695</b>

**Ծանոթագրություն 6. «Այլ գործառնական եկամուտ»**

<b>Այլ գործառնական եկամուտ</b>	<b>01.04.19-30.06.19</b>	<b>01.01.19-30.06.19</b>	<b>01.04.18-30.06.18</b>	<b>01.01.18-31.06.18</b>
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	22,472	131,000	48,898	83,593
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	33,397	64,333	26,525	57,216
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	(7,728)	(7,728)	-	-
Այլ եկամուտներ	21,143	36,434	14,699	27,508
<b>Ընդամենը</b>	<b>69,284</b>	<b>224,039</b>	<b>90,122</b>	<b>168,317</b>

**Ծանոթագրություն 7. ՖՀՄՍ 9-ով Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ**

<b>Հաճախորդներին տրված վարկերի, փոխառությունների գծով</b>	<b>Ծանոթ.</b>	<b>01.01.19-31.06.19</b>
Ակզբնական մնացորդ	16	1,007,563
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(424,375)
Վերագնահատումից զուտ եկամուտներ		(11,542)
Դուրսգրում/վերականգնում		(511,491)
<b>Վերջնական մնացորդ</b>		<b>1,106,221</b>
<b>Բանկերի և այլ ֆին. կազմակերպությունների գծով</b>	14	
Ակզբնական մնացորդ		125,477
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(7,377)
Դուրսգրում/վերականգնում		-
<b>Վերջնական մնացորդ</b>		<b>118,100</b>
<b>Այլ ակտիվների գծով</b>	22	
Ակզբնական մնացորդ		187,924
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(155,748)
Վերագնահատումից զուտ եկամուտներ		-
Դուրսգրում/վերականգնում		(9,855)
<b>Վերջնական մնացորդ</b>		<b>42,031</b>
<b>Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող</b>	17	



Սկզբնական մնացորդ		894
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		15,274
<b>Վերջնական մնացորդ</b>		<b>16,168</b>
<b>Անորոշագցված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվների գծով</b>	18	
Սկզբնական մնացորդ		695
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		109,410
<b>Վերջնական մնացորդ</b>		<b>110,105</b>
<b>Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ</b>		
Սկզբնական մնացորդ		35,892
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(10,587)
<b>Վերջնական մնացորդ</b>		<b>25,305</b>
<b>Ընդամենը զուտ մասհանումներ պահուստներին</b>		<b>(473,403)</b>

**Ծանոթագրություն 8. «Ընդհանուր վարչական ծախսեր»**

Ընդհանուր վարչական ծախսեր	01.04.19-30.06.19	01.01.19-30.06.19	01.04.18-30.06.18	01.01.18-31.06.18
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	445,461	894,185	419,890	879,787
Վերապատրաստման և ուսուցման գծով ծախսեր	843	939	542	740
Գործուղման ծախսեր	6,964	9,928	5,873	9,379
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	46,836	94,881	47,781	97,546
Ապահովագրության ծախսեր	2,406	5,030	2,538	4,562
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	3,150	5,967	4,238	8,172
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	34,575	75,889	35,569	81,107
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	8,157	15,157	11,690	18,070
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	15,925	31,202	16,140	32,324
Տրանսպորտային ծախսեր	8,679	16,096	8,749	16,398
Ծախսեր հարկերի (բացառությամբ՝ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	31,507	62,197	33,584	63,608
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	5,523	11,623	7,599	13,706
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	8,014	13,026	4,256	8,464
Այլ վարչական ծախսեր	14,747	26,188	9,043	30,727
<b>Ընդամենը</b>	<b>632,787</b>	<b>1,262,308</b>	<b>607,492</b>	<b>1,264,590</b>

	01.04.19-30.06.19	01.01.19-30.06.19	01.04.18-30.06.18	01.01.18-31.06.18
Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը	479	482	490	496
Մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափը	331.20	367.50	282.90	312.50

**Ծանոթագրություն 9. «Այլ գործառնական ծախսեր»**

Այլ գործառնական ծախսեր	01.04.19-30.06.19	01.01.19-30.06.19	01.04.18-30.06.18	01.01.18-31.06.18
Վճարված տուգանքներ և տույժեր	300	300	120	120
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	2,811	5,512	4,213	9,373
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	6,287	9,857	4,106	8,902
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների անորոշագցիոն ծախսեր	62,451	122,396	59,564	122,443
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ	24,409	49,848	23,606	47,606
Այլ ծախսեր	21,230	43,459	29,813	48,337
<b>Ընդամենը</b>	<b>117,488</b>	<b>231,372</b>	<b>121,422</b>	<b>236,781</b>

**Ծանոթագրություն 10. «Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս»**

Բանկը վերահսկվող կազմակերպություններում ներդրումներ չունի:

**Ծանոթագրություն 11. «Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)»**

Գործող օրենսդրության համաձայն կիրառվող շահութահարկի դրույքաչափը 20% է: ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով: Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը:

	30/06/19	Արդյունավետ դրույքաչափ (%)	30/06/18	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	3,690,708		4,822,096	
Շահութահարկ՝ դրույքաչափով		20		20
Չհարկվող եկամուտներ				
Չնվազեցվող ծախսեր				
Շահութահարկի գծով ծախս	485,000		530,000	

**Ծանոթագրություն 11.1. Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը**

	30/06/19	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքով	30/06/18
<b>Հերաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝</b>	0			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող				
Ստեղծված պահուստների գծով				
Այլ պարտավորությունների գծով				
<b>Հերաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝</b>	108,220	(50,220)	11,419	147,021
Հիմնական միջոցների գծով	96,801	(50,220)		147,021
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի գծով	11,419		11,419	-
<b>Ձուր հերաձգված հարկային ակտիվ/պարտավորություն</b>	<b>108,220.00</b>	<b>(50,220.00)</b>	<b>11,419.00</b>	<b>147,021.00</b>

**Ծանոթագրություն 12. «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ»**

<u>Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ</u>	30/06/19	30/06/18
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	3,205,708	4,292,096
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող սովալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	3,205,708	4,292,096
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	465,223	465,223
<b>Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ</b>	<b>3.86</b>	<b>5.1</b>

**Ծանոթագրություն 13. «Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»**

<b>Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում</b>	30/06/19	31/12/18
Կանխիկ դրամական միջոցներ	1,845,121	1,328,645
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	1,539,215	1,837,373
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	4,694,944	6,304,514
Դեպոզիտային միջոցներ ՀՀ ԿԲ-ում*	144,500	374,500
Ժամկետային ավանդներ ԿԲ-ում	-	4,001,972
<b>Ընդամենը</b>	<b>8,223,780</b>	<b>13,847,004</b>
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ և հուշարձաններ	139,422	128,643

\*ՀՀ ԿԲ-ում դեպոզիտային 144,5 մլն դրամի գումարը իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ

**Ծանոթագրություն 14. «Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»**

<u>Ընթացիկ հաշիվներ</u>	30/06/19	31/12/18
ՀՀ բանկերում	11,609	11,745
Ոչ ռեզիդենտ բանկերում	755,762	321,079

Հաշվեգրված տոկոսներ	-	-
<b>Ընդամենը</b>	<b>767,371</b>	<b>332,824</b>
Միջբանկային վարկեր և ավանդներ, այլ պահանջներ		
ՀՀ բանկերում՝ վարկեր և ավանդներ	-	-
ՀՀ բանկերում՝ այլ պահանջներ	-	-
Ոչ ռեզիդենտ բանկերում՝ վարկեր և ավանդներ	-	-
Ոչ ռեզիդենտ բանկերում՝ այլ պահանջներ	31,357	28,512
Ռեպո համաձայնագրեր ՀՀ բանկերի նկատմամբ	11,334,510	8,366,360
Հաշվեգրված տոկոսներ	9,062	8,079
<b>Ընդամենը</b>	<b>11,374,929</b>	<b>8,402,951</b>
<b>Զուտ պահանջներ բանկերի նկատմամբ</b>	<b>12,142,300</b>	<b>8,735,775</b>

<b>Ֆինանսական կազմակերպություններում վարկեր և ավանդներ, այլ պահանջներ</b>	<b>30/06/19</b>	<b>31/12/18</b>
ՀՀ ֆինանսական կազմակերպություններում՝		
վարկեր և ավանդներ	-	-
ռեպո (հետգնման) պայմանագրեր	8,469,363	7,444,876
այլ	88,841	78,603
Հաշվեգրված տոկոսներ	7,306	8,564
<b>Ընդամենը</b>	<b>8,565,510</b>	<b>7,532,043</b>
Բանկերի և այլ ֆին. կազմակերպությունների գծով պահուստ (ծանոթ. 7)	118,100	125,477
<b>Զուտ պահանջներ բանկերի և Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</b>	<b>20,589,710</b>	<b>16,142,341</b>

Ծանոթագրություն 15. «Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ»

<b>Պետական արժեթղթեր</b>	<b>30/06/19</b>	<b>31/12/18</b>
ՀՀ պետական արժեթղթեր		
Ընդամենը պետական արժեթղթեր		

Ծանոթագրություն 16. «Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ»

<b>Տրված վարկեր և այլ փոխառություններ</b>	<b>30/06/19</b>	<b>31/12/18</b>
Վարկեր, այդ թվում՝	82,158,707	76,558,475
Հիփոթեքային	8,475,909	8,729,819
Օվերդրաֆտ	898,756	751,406
Վարկային քարտեր	3,877,995	3,673,901
Ֆակտորինգ	744,070	614,865
Բանկային երաշխիքներ	-	-
Ռեպո համաձայնագրեր	480,671	-
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ	693,562	735,972
Ընդամենը վարկեր	<b>88,853,761</b>	<b>82,334,619</b>
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	1,106,221	1,007,563
Ընդամենը գուտ վարկեր	<b>87,747,540</b>	<b>81,327,056</b>

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վարկային պորտֆելում հաճախորդներին տրամադրված արժեքով (չաշխատող) ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների կառուցվածքը	30/06/19	31/12/18
	գումարը	գումարը
Ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված վարկեր և փոխառություններ, որից	88,160,199	81,598,647
արժեքով (չաշխատող) ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված վարկեր և փոխառություններ, այդ թվում՝	1,003,968	730,705
ժամկետանց	69,733	53,392
հաշվեգրված տոկոսներ	693,562	735,972
Ընդամենը վարկեր	<b>88,853,761</b>	<b>82,334,619</b>

Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	1,106,221	1,007,563
<b>Ընդամենը զուտ վարկեր</b>	<b>87,747,540</b>	<b>81,327,056</b>

Տրամադրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ հաճախորդների	30/06/19	31/12/18
<b>Պետական ձեռնարկություններ</b>	<b>47,287,167</b>	<b>48,016,738</b>
<b>Մասնավոր ձեռնարկություններ, այդ թվում՝</b>	<b>22,945,795</b>	<b>16,547,450</b>
խոշոր ձեռնարկություններ	4,403,563	3,277,795
փոքր և միջին ձեռնարկություններ*	18,542,232	13,269,655
<b>Ֆիզիկական անձինք, այդ թվում՝</b>	<b>18,263,148</b>	<b>17,387,188</b>
սպառողական վարկեր	5,113,570	4,284,478
հիփոթեքային վարկեր	8,737,278	8,948,325
ավտոմեքենաների ձեռքբերման վարկեր	136	1,855
վարկային քարտեր	3,898,689	3,693,266
<b>Անհատ ձեռնարկատերեր</b>	<b>357,651</b>	<b>383,243</b>
Այդ թվում՝ հաշվեգրված տոկոսներ	693,562	735,972
<b>Ընդամենը վարկեր</b>	<b>88,853,761</b>	<b>82,334,619</b>
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	1,106,221	1,007,563
<b>Ընդամենը զուտ վարկեր</b>	<b>87,747,540</b>	<b>81,327,056</b>

\* Փոքր և միջին ձեռնարկությունների չափորոշիչները սահմանված են «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

Տրամադրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ վարկավորման ոլորտների	30/06/19	Տեսակարար կշիռը (%)	31/12/18	Տեսակարար կշիռը (%)
Գյուղատնտեսություն	1,138,781	1.28%	1,096,392	1.23%
Արդյունաբերություն	1,899,495	2.14%	2,089,410	2.35%
Շինարարություն	1,527,902	1.72%	1,511,017	1.70%
Առևտուր	1,425,079	1.60%	1,378,776	1.55%
Տրանսպորտ և կապ	16,149	0.02%	28,948	0.03%
Կեղության և հանրային սննդի կազմակերպում	128,724	0.14%	58,193	0.07%
Կրթություն և մշակույթ	-	0.00%	-	0.00%
Առողջապահություն	579,274	0.65%	709,133	0.80%
Հիպոթեքային վարկեր	8,737,278	9.83%	8,948,325	10.07%
Սպառողական վարկեր	9,014,276	10.15%	7,979,665	8.98%
Տնտեսության այլ ճյուղեր	64,386,803	72.46%	58,534,760	65.88%
Այդ թվում՝ Հաշվեգրված տոկոսներ	693,562		735,972	
<b>Ընդամենը</b>	<b>88,853,761</b>	<b>100.00%</b>	<b>82,334,619</b>	<b>92.66%</b>

Ծանոթագրություն 17. «Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ»

	30/06/19	31/12/18
Կապիտալի գործիքներ	59,457	59,457
ՀՀ պետական արժեթղթեր	5,670,466	5,701,406
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	10,419	525,925
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով (ծանոթ. 7)	16,168	894
<b>Ընդամենը Իրական արժեքով՝այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող</b>	<b>5,724,174</b>	<b>6,285,894</b>

Այլ անձանց բաժնետիրական կապիտալում իրականացված ներդրումները.

Անձի անվանումը	Հիմնական գործունեությունը	Գրանցման երկիրը	Ներդրման ամսաթիվը	Ներդրումը	Բաժնեմասը (%)
1. «Արմենիան Քարտ» ՓԲԸ	վճարահաշվարկային կազմակերպություն	<< ք.Երևան	21.01.03	12,143	1.25
2. «ԱՔՈԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ	վարկային բյուրո	<< ք.Երևան	27.11.07	19,314	3.68
3. «ԱրցախՀԷԿ» ԲԲԸ	Էլեկտրաէներգիայի արտադրություն	ԱՀ ք.Ստեփանակերտ	15.09.16	28,000	0.23
Ընդամենը				59,457	

**Ծանոթագրություն 18. «Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ»**

Պետական արժեթղթեր	30/06/19	31/12/18
ՀՀ պետական պարտատոմսեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր	14,447,082	13,094,698
Հաշվեգրված տոկոսներ	143,719	190,107
Ընդամենը պետական արժեթղթեր	14,590,801	13,284,805

ՀՀ ոչ պետական արժեթղթեր		
երկարաժամկետ պարտքային գործիքներ	14,426,185	14,590,786
կարճաժամկետ պարտքային գործիքներ		
Հաշվեգրված տոկոսներ	322,259	326,553
Ընդամենը	14,748,444	14,917,339
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	110,105	695
Զուտ ներդրումներ ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներում	29,229,140	28,201,449

Ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝	30/06/19	31/12/18
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ակտիվներ	0	0
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներ	5,346,890	6,285,894
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	25,254,707	28,201,449
Ռեպո համաձայնագրով վաճառված	4,351,717	0

**Ծանոթագրություն 19. «Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում»**

Բանկը չունի ներդրումներ վերահսկվող անձանց կապիտալում:

**Ծանոթագրություն 20. «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ»**

	30/06/19	31/12/18
Գույքի բռնագանձման արդյունքում առաջացած վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	2,803,640	2,719,182

**Ծանոթագրություն 21. «Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»**

**Հիմնական միջոցներ**

Հոդվածի անվանումը	Հող	Շենքեր	Համակ. և կապի միջոցներ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմն. միջոցներ	Հիմն. միջ. գծով կապ. ներդ.	Վարձակառն. միջոցով կապ. ներդ.	Օգտագործման իրավունքի ակտիվ	Ընդամենը
Սկզբնական արժեք										
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի	211,586	4,702,541	1,101,488	232,217	161,957	356,948	0	101,244	-	6,867,981

Ավելացում			5,197	482		623	509				6,811
Օտարում			247								247
Վերադասակարգում											-
Վերազնահատում											-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի	211,586	4,702,541	1,106,438	232,699	161,957	357,571	509	101,244	-		6,874,545
Ավելացում			43,465	1,209	-	13,223			462,593		494,045
Օտարում		74,106			6,191						80,296
Վերադասակարգում											-
Վերազնահատում											-
Մնացորդը հաշվետվու ժամանակաշրջանի	211,586	4,628,435	1,149,903	233,908	155,766	344,348	509	101,244	462,593		7,288,293
<b>Կուտակված մաշվածություն</b>											-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի		2,192,941	870,043	203,028	85,811	290,732	-	34,566	-		3,677,121
Ավելացում		34,350	12,032	1,127	3,173	3,664		2,170			56,516
Օտարում			105								105
Վերադասակարգում											-
Վերազնահատում											-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի		2,227,291	881,970	204,155	88,984	294,396	-	36,736	-		3,733,532
Ավելացում		23,491	12,287	1,174	3,244	-	11,113	2,220	1,731		33,035
Օտարում/ դուրս գրում					5,951						5,951
Վերադասակարգում											-
Վերազնահատում											-
Մնացորդը հաշվետվու ժամանակաշրջանի		2,250,782	894,257	205,329	86,277	283,283	-	38,956	1,731		3,760,616
<b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>											-
հաշվետու ժամանակաշրջանի վերջում	211,586	2,377,653	255,646	28,579	69,489	61,065	509	62,288	460,862		3,527,678
նախորդ հաշվետու ժամանակաշրջանի	211,586	2,475,250	224,468	28,544	72,973	63,175	509	64,508	-		3,141,013

Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Կապիտալ ներդր. բանկի ոչ նյութակ. ակտիվներում	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>					
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	105,055	59,416			164,471
Ավելացում					-
Վերադասակարգում					-
Օտարում					-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	105,055	59,416			164,471
Ավելացում		-1,296			(1,296)
Վերադասակարգում					-
Օտարում					-
Մնացորդը հաշվետվու ժամանակաշրջանի վերջում	105,055	58,120			163,175
<b>Կուտակված մաշվածություն</b>					
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	102,506	28,218			130,724
Ավելացում	510	2,920			3,430
Վերադասակարգում					-
Օտարում					-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	103,016	31,138			134,154
Ավելացում	0	1,537			1,537
Վերադասակարգում					-
Օտարում					-
Մնացորդը հաշվետվու ժամանակաշրջանի վերջում	103,016	32,675	0		135,691
<b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>					
հաշվետու ժամանակաշրջանի վերջում	2,039	25,445	0	0	27,484
նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	2,039	28,278	0	0	30,317

Ծանոթագրություն 22. «Այլ պահանջներ»

	30/06/19	31/12/18
<b>Բանկային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ</b>		
Այլ գործառնություններից ստացվելիք գումարներ	29,715	869,262

<b>Ընդամենը</b>	<b>29,715</b>	<b>869,262</b>
<b>Ռեբիտորական պարտքեր և կանխավճարներ</b>	-	-
Ռեբիտորական պարտքեր բյուջեի գծով	-	-
Ռեբիտորական պարտքեր մատակարարների գծով	2,512,024	3,036,690
Կանխավճարներ աշխատակիցներին	-	23
Կանխավճարներ մատակարարներին	253,488	62,110
Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով	585,150	
Այլ ռեբիտորական պարտքեր և կանխավճարներ	-	-
<b>Ընդամենը</b>	<b>3,350,662</b>	<b>3,098,823</b>
Այլ ակտիվներ Պահեստ	22,815	23,760
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	10,392	3,067
Այլ ակտիվներ	-	-
<b>Ընդամենը</b>	<b>33,207</b>	<b>26,827</b>
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	42,031	187,924
<b>Ընդամենը այլ ակտիվներ</b>	<b>3,371,553</b>	<b>3,806,988</b>

